Հավելված 2

Հաստատում եմ՝ _____ Գ. Գրիգորյան

«Ֆրանս-հայկական մասնագիտական ուսումնական

կենտրոն» հիմնադրամի տնօրեն

«01» սեպտեմբերի 2021թ.

ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ, ՎԵՐԱՆԱՅՄԱՆ, ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵՎ ՀԱՍՏԱՏՄԱՆ

ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1 Սույն կանոնակարգը կարգավորում է «Ֆրանս-հայկական մասնագիտական ուսումնական կենտրոն» հիմնադրամում (այսուհետ՝ Հիմնադրամ) իրականցվող միջին մասնագիտական և նախնական (արհեստագործական) կրթական ծրագրերի մշտադիտարկման, գնահատման, վերանայման և հաստատման գործընթացները:

1.2 Մասնագիտական կրթական ծրագրերի մշտադիտարկումը որակի ապահովման գործընթաց է, որի նպատակն է գնահատել ծրագրերի մատուցման որակն ու համապատասխանությունը կրթական չափորոշչի պահանջներին, վերհանել ծրագրի թույլ և ուժեղ կողմերը: Բացահայտել թերություններն ու կատարել բարելավումներ:

1.1 Հիմնադրամում ուսուցանվող մասնագիտական կրթական ծրագրերի մոդուլների մշտադիտարկումը, վերանայումն ու հաստատումը իրականացվում են համաձայն սույն կանոնակարգի :

1.2 Վերանայման համար հիմք են հանդիսանում ԿԳՄՍ նախարարության որոշումները, հրամանները և այլ իրավական ակտեր:

1.3 Տվյալ մոդուլի յուրաքանչյուր դասավանդողի համար պարտադիր պայման է դասավանդելիս առաջնորդվել հաստատված ծրագրով:

1.4 Հաստատված ծրագրերի մեկական օրինակ պահպանվում է տնօրենի՝ ուսումնական աշխատանքների գծով տեղակալի մոտ:

2. ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄ

2.1 Ուսումնական ծրագրերի մշտադիտարկման գործընթացը իրականացվում է Հիմնադրամի տնօրենի կողմից նախապես ներկայացված ժամանակացույցով:

2.2 Մշտադիտարկում իրականացնելու նպատակով Հիմնադրամի տնօրենի կողմից կազմվում է մշտադիտարկման խումբ:

2.3 Անհրաժեշտության դեպքում կարող է խմբում ներառվել Հիմնադրամի արտաքին շահակիցներից:

2.4 Մշտադիտարկման ավարտին խումբը կազմում է հաշվետվություն, որտեղ արտացոլվում են մոնիթորինգի արդյունքները:

2.5 Մոնիթորինգի արդյունքները ձևավորվում են՝ հիմք ընդունելով ուսանողների և շրջանավարտների հարցումները, գործատուների կարծիքները, ընդունելությունը տվյալ մասնագիտության գծով, քննությունների արդյունքները և այլն:

2.6 Տնօրենի՝ ուսումնական աշխատանքների գծով տեղակալը դիտարկում է մշտադիտարկաման խմբի հաշվետվությունը և իր եզրակացությունը տրամադրում է Հիմնադրամի տնօրենին::

2.7 Հիմնադրամի տնօրենը, ելնելով մշտադիտարկման արդյունքներից և իր տեղակալի եզրակացությունից, անհրաժեշտության դեպքում հրաման է արձակում վերանայել տվյալ ծրագիրը:

3. ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ

3.1 Մասնագիտական կրթական ծրագրերի գնահատումը հաջորդում է մշտադիտարկման գործընթացին:

3.2 Գնահատման միջոցով ուսումնասիրվում է ծրագրերի համապատասխանությունը հաստատության առաքելությանը և պետական կրթական չափորոշիչներին, ինչպես նաև աշխատաշուկայի արդի պահանջներին:

3.3 Գնահատումն իրականացվում է մշտադիտարկման արդյունքում մշակված հաշվետվության հիման վրա:

3.4 Գնահատման հաշվետվությունը կազմում է տնօրենի՝ ուսումնական աշխատանքների գծով տեղակալը և ներկայացնում է Հիմնադրամի տնօրենին:

4. ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՎԵՐԱՆԱՅՈՒՄ

4.1 Հիմնադրամում առկա մասնագիտական կրթական ծրագրերի վերանայման գործընթացում ներգրավված են դասավանդող դասախոսը, համապատասխան մասնագիտական խմբի անդամները, ուսումնամեթոդական խորհուրդը, որակի ապահովման պատասխանատուն, արտաքին փորձագետը:

4.2 Առկա ծրագրերը վերանայելիս հաստատությունն առաջնորդվում է ՊԿՉ-ներով, ուսումնական պլանով և սույն կանոնակարգով:

4.3 Հավանության արժանացած ծրագիրը ներկայացվում է ուսումնամեթոդական խորհուրդ:

4.4 Բացթողումներն ու թերությունները շտկելու նպատակով վերանայող խմբի կողմից մշակվում է բարելավման պլան:

4.5 Ուսումնամեթոդական խորհրդի կողմից հաստատված ծրագիրը ներկայացվում է Հիմնադրամի տնօրենին՝ վերջնական հաստատման:

Սույն կանոնակարգն ուժի մեջ է մտնում հաստատման պահից: